

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

*Արցախի պետական համալսարանի խորհրդի՝ 2018թ. հոկտեմբերի 4-ի
N 2 նիստի*

Նիստին ներկա էին խորհրդի 28 անդամներից 27-ը:
*Հրավիրված էին խորհրդի անդամ չհանդիսացող, ռեկտորի թեկնածության
հավակնորդներ Արտեմ Նիկողայի Աբրահամյանը, Կամո Իվանի Աթայանը:*

Նախագահությամբ՝ Գրիգորի Իգորի Մարտիրոսյանի
Քարտուղարությամբ՝ Լուսինե Գեորգիի Մարգարյանի

ՕՐԱԿԱՐԳ

1. Ռեկտորի թեկնածուների՝ Արցախի պետական համալսարանի ռեկտորի
ընտրության ընթացակարգի պահանջներին բավարարելու հարցը:

/Զեկուցող՝ ԱրՊՀ խորհրդի քարտուղար Մարգարյան Լ./

2. Ռեկտորի թեկնածուների ծրագրային ելույթների ներկայացման հարցը:

/Զեկուցող՝ ԱրՊՀ խորհրդի նախագահ Մարտիրոսյան Գ./

3. Ռեկտորի ընտրության անցկացումը:

/Զեկուցող՝ ԱրՊՀ խորհրդի նախագահ Մարտիրոսյան Գ./

Լսեցին՝ - Ռեկտորի թեկնածուների՝ Արցախի պետական համալսարանի
ռեկտորի ընտրության ընթացակարգի պահանջներին բավարարելու հարցը:

Խորհրդի նախագահը, ողջունելով խորհրդի անդամներին և ներկայացնելով
աշխատակարգը, օրակարգի առաջին հարցի մասով խոսքը փոխանցեց
քարտուղարին:

Խորհրդի քարտուղարը տեղեկացրեց, որ 2018թ. օգոստոսի 23-ից մինչև
սեպտեմբերի 21-ը հայտարարված ԱրՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի համար
բաց մրցույթի առաջին իսկ օրից բացվել էր հայտերի ընդունման
գրանցամատյան, յուրաքանչյուր օր կատարվել է նշում և օրվա ավարտին կնիքով

Էջը փակվել: Սեպտեմբերի 7-ին իր թեկնածությունն է առաջադրել Բ.Գ.Թ., դոցենտ Արմեն Յուրիկի Մարգարյանը, սեպտեմբերի 14-ին մ.գ.դ., պրոֆեսոր Կամո Իվանի Աթայանը՝ նույնպես ինքնառաջադրմամբ, սեպտեմբերի 20-ին՝ բնագիտական ֆակուլտետի կողմից առաջադրվել է ք.գ.թ., Արցախի պետական համալսարանի պրոֆեսոր Արտեմ Նիկոլայի Աբրահամյանի թեկնածությունը: Բոլոր թեկնածուների ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ընթացակարգի պահանջներին: Քարտուղարը հայտնեց նաև, որ փաստաթղթերի բնօրինակները, ըստ ընթացակարգի պահանջի, սեպտեմբերի 22-ին հանձնվել են խորհրդի նախագահին: Համապատասխան ժամկետում՝ սեպտեմբերի 24-ին, 25-ին, ապահովվել էր բոլոր փաստաթղթերի՝ թե՛ թղթային տարբերակով, թե՛ էլեկտրոնային տարբերակով, հասանելիությունը խորհրդի անդամներին:

Հարցեր չհնչեցին հավակնորդների փաստաթղթերի համապատասխանության առումով:

1. Որոշեցին՝

Վավեր համարել թեկնածուների՝ Արցախի պետական համալսարանի ռեկտորի ընտրության ընթացակարգի պահանջներին համապատասխանությունը և հաստատել:

2. Լսեցին՝

Ռեկտորի թեկնածուների ծրագրային ելույթների ներկայացման հարցը:

Խորհրդի նախագահն իրազեկեց, որ ծրագրային ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տրվում է թեկնածուներին՝ հիշեցնելով, որ յուրաքանչյուր թեկնածու ունի ոչ ավելի, քան 10 րոպե տևողությամբ ելույթի իրավունք, իսկ թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին կամ ծրագրային ելույթին:

Գործունեության ծրագիրը ներկայացնելու համար առաջին խոսքը տրվեց **Արտեմ Նիկոլայի Աբրահամյանին:** /Զեկուցումը կցվում է. առդիր 3 էջ:/

Ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարեց **հարցերի 1-ին հերթագրում:**
Հերթագրվեցին՝

- 1. Մարտիրոսյան Գրիգորի**
- 2. Մանգասարյան Ռուզաննա**
- 3. Վարդանյան Արարատ**
- 4. Հովսեփյան Նորայր**

Ըստ հերթագրման հերթականության էլ Արտեմ Նիկոլայի Աբրահամյանին հարց տալու հնարավորություն տրվեց:

Հարց 1-ին. _Ո՞րն է ընդունելության կազմակերպման, բազմազանեցման Ձեր տեսլականը, առավելապես երբ բնագիտական մասնագիտությունները գրավիչ դարձնելու խնդիր կա:

Պատասխան 1-ին. _ Այսօր համալսարանում բնագիտական մասնագիտությունների կտրվածքով տիրող իրավիճակը հուշում է, որ ԱրՊՀ ընդունելության գործընթացն անհրաժեշտ է ենթարկել որոշակի փոփոխությունների: Գտնում ենք, որ ԱրՊՀ կառուցվածքում պիտի ունենալ հենակետային վարժարան՝ ավագ դպրոցի կարգավիճակով և նրա շրջանավարտներին բուհ ընդունել առանց ընդունելության քննությունների: Պիտի պնդենք, որ բնագիտական մասնագիտությունների ընդունելությունը կազմակերպվի առանց ընդունելության քննությունների՝ դպրոցների կողմից տրված հավաստագրերի հիման վրա:

Հարց 2-րդ. _Ինչպե՞ս բարձրացնել մատուցվող կրթական ծառայությունների մակարդակը, երբ թեստային հարցման եղանակն իրականում անհամադրելի է որակին:

Պատասխան 2-րդ. _ Մատուցվող կրթական ծառայությունների մակարդակը հնարավոր է բարձրացնել մշտակա լավարկման աշխատանքներով, այդ թվում նաև թեստային առաջադրանքների որակական բաղադրիչը կարևորելով և ոչ դրանք ամբողջապես բացառելով:

Հարց 3-րդ. _Կադրային քաղաքականության իրականացման և ըստ այդմ՝ ֆինանսական միջոցների տնօրինման ի՞նչ մեխանիզմներ եք նախատեսում:

Պատասխան 3-րդ. _Ներկա պահին համալսարանի ֆինանսական հնարավորություններին ծանոթ չեմ, և դրանց բաշխման գործող համակարգն էլ մեզ տեսանելի չէր: Երբ մեզ հնարավորություն տրվի դրանք տնօրինելու, մեխանիզմները թափանցիկ ու հասանելի կլինեն:

4-րդ հարցատուն՝ Հովսեփյան Նորայրը, հանեց հարցը՝ այն արդեն իսկ հնչեցրած լինելու պատճառով:

Հայտարարվեց **հարցերի 2-րդ հերթագրում:**

Հերթագրվեցին՝

1. Իշխանյան Բրինա

2. Թադևոսյան Բրա

Ըստ հերթագրման հերթականության էլ հարց տալու հնարավորություն տրվեց:

Հարց 1-ին. _Որքանո՞վ է արդյունավետ թեստային առաջադրանքների պատասխանների տրամադրումը և ինչպե՞ս որակյալ կրթություն տալ, երբ իրականում նյութի սերտումն է առաջնային դառնում և ոչ ստեղծագործականությունը:

Պատասխան 1-ին. _Թեստային առաջադրանքների տրամադրումն անհրաժեշտ է, պետք է նորից պնդեմ, որ թեստերը որակական փոփոխությունների ենթարկելու անհրաժեշտություն կա, և բացի այդ՝ եթե ուսանողը բոլոր դասընթացների թեստերի առաջադրանքների պատասխաններն անգիր իմանա, կնշանակի մասնագիտական բարձր պատրաստականությունը, նյութի լիարժեք տիրապետման առումով, ապահովված է:

Հարց 2-րդ. _Ինչպե՞ս, ի՞նչ կարգով պիտի կազմակերպվի բուհի ընդունելությունը, եթե Դուք կողմնակից եք առանց քննությունների բուհ ընդունվելու մոտեցմանը:

Պատասխան 2-րդ. _ Ընթացակարգերի մշակումը հետագա գործընթաց է, որը լիազորված պետական մարմնի հետ աշխատանքի արդյունքում պիտի որոշվի: Իսկ այդ մտածումը վերաբերում է իմ երազած համալսարանին և ոչ ներկային:

Հերթական ելույթի խոսքը տրվում է **Կամո Իվանի Աթայանին:** /Զեկուցումը կցվում է. առդիր 14 էջ:/

Ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարեց **հարցերի 1-ին հերթագրում:**
Հերթագրվեցին՝

- 1. Վարդանյան Արարատ**
- 2. Աղաբայան Նարինե**
- 3. Մարտիրոսյան Գրիգորի**
- 4. Մանգասարյան Ռուզաննա**

Ըստ հերթագրման հերթականության՝ թեկնածուին հարց տալու հնարավորություն տրվեց:

Հարց 1-ին. _Ձեր ծրագրում, ի թիվս մի շարք գիտահետազոտական ինստիտուտների, Հայագիտական ինստիտուտի մասին խոսք չկար: Համահայկական գիտական տարածքում հայագիտական ուսումնասիրությունը որքանո՞վ եք կարևորում: Նշենք, որ ներկայումս ԱրՊՀ-ում հայագիտական կենտրոն գործում է:

Պատասխան 1-ին. _Գիտահետազոտական ինստիտուտների ստեղծման հարցում, բնականաբար, առաջնայինը հայագիտական ուղղությունն է, առանց որի խոսք լինել չի կարող մյուսների մասին: Բոլոր ինստիտուտներն էլ մի առաքելություն են ունենալու. գիտելիքը պիտի ստեղծի բարիք հայկական ազգային կրթության ու գիտության տարածքում:

Հարց 2-րդ. _Ինչպե՞ս եք պատկերացնում ԱրՊՀ հավատարմագրման գործընթացը՝ երկրի չճանաչվածության փաստը հաշտելով:

Պատասխան 2-րդ. _ Ինձ համար տարակուսելի էր, որ դեռևս ԱրՊՀ-ն հավատարմագրված չէ: Իսկ հավատարմագրումը պիտի այն նույն

ընթացակարգերով առաջանա, ինչպես որ ՀՀ-ի հավատարմագրված բուհերն են այդ գործընթացում ընդգրկվել:

Հարց 3-րդ. _ Ո՞րն է ԱրՊՀ-ի մրցակցային առավելությունը՝ լինելով չճանաչված պետության բարձրագույն ուսումնական հաստատություն. Ձեր դիտարկումը.:

Պատասխան 3-րդ. _ Որպես առավելություն՝ կարող ենք համարել չճանաչվածության փաստն ինքնին, որովհետև դա տալիս է դաշտում ինքնուրույն գործելու, ըստ տեղական պահանջների և խնդիրների՝ որոշումների հստակեցում, ծրագրերի իրականացում: Իրականացվող աշխատանքների հիմնավորվածությունը անխոչընդոտ կարող է բխեցվել երկրի, պետության համար առաջնահերթ շահերից ու առաջադիր խնդիրներից: Առավելություն են նաև աշխատակիցների աշխատելու պատրաստակամությունը, աշխատասիրությունը, նվիրվածությունը:

Հարց 3-րդ. _ Ֆինանսական ի՞նչ միջոցների հաշվին եք նախատեսում բարձրակարգ տեխնոլոգիաների ներդրումը և տեխնիկական զինվածության ապահովումը:

Պատասխան 4-րդ. _ Պիտի կրկնեմ նախորդ բանախոսի խոսքերն այն մասին, որ համալսարանի ֆինանսական հնարավորություններին ներկա պահին ծանոթ չեմ, ըստ այդմ՝ դեռևս հստակ ուրվագծված չեն ծրագրային այդ դրույթների իրականացման ճանապարհները:

Հայտարարվեց **հարցերի 2-րդ հերթագրում:**

Հերթագրվեց՝

1. Աղաբայյան Նարինե

Հարց տալու հնարավորությունը տրվեց Ն. Աղաբայյանին:

Հարց 1-ին. _ Ճշգրտում անելով՝ նշենք, որ խոսքը միջազգային հավատարմագրման մասին է, և ՀՀ-ում որևէ կառույց իրավասու չէ միջամտելու ԱրՊՀ միջազգային հավատարմագրման գործընթացին, իսկ աջակցությունը զուտ խորհրդատվական է: Դուք ի՞նչ հնարավորություններ կառաջարկեիք այդ գործընթացի կազմակերպման հարցով:

Պատասխան 1-ին. _ Այս պահին խնդրին լիապես ծանոթ չեմ, կմտածենք և ըստ հնարավորի կփորձենք գտնել արդյունավոր տարբերակ:

Գործունեության ծրագիրը ներկայացնելու համար խոսքը տրվեց **Արմեն Յուրիկի Սարգսյանին:** /Զեկուցումը կցվում է. առդիր 18 էջ:/

Ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարեց **հարցերի 1-ին հերթագրում:**

Հերթագրվեցին՝

- 1. Ավանեսյան Նելլի**
- 2. Մարտիրոսյան Գրիգորի**
- 3. Մանգասարյան Ռուզաննա**

4. Վարդանյան Արարատ

5. Հովսեփյան Նորայր

Ըստ հերթագրման հերթականության՝ թեկնածուին հարց տալու հնարավորություն տրվեց:

Հարց 1-ին. _Օտար լեզուների ուսուցման մակարդակի բարձրացումն այսօր կրթական դաշտի զարգացման տրամաբանությունից է բխում: Այդ տեսանկյունից որքանո՞վ եք նպատակային համարում ԱրՊՀ-ում տարեցտարի կրճատվող ժամաքանակը՝ մասնավորապես ֆրանսերեն, գերմաներեն ուսուցող դասընթացներում:

Պատասխան 1-ին. _ Օտար լեզուների ուսուցման մակարդակի բարձրացումը մենք առաջնահերթորեն կարևորել ենք մեր ծրագրում, առավելապես որ այն բարձրագույն կրթության մասին օրենքի նախագծում ընդգծված է: ԱրՊՀ-ի կողմից վարվող այդ քաղաքականությունը բխում էր շահակիցների՝ դիմորդների թվաքանակի և պահանջների հաշվառումից: Առաջիկայում միտումների փոփոխություններ են ենթադրվում, ինչը մենք, հնարավորություն ունենալով, նպատակային կօգտագործենք ԱրՊՀ-ում մասնագիտությունների հայտերը ներկայացնելիս և դրանք ճիշտ կուղղորդենք՝ օտար լեզուների ուսուցման բաղադրիչը մեծացնելով ոչ միայն բակալավրիատում, այլ նաև մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերում:

Հարց 2-րդ. _ա/ Ձեր ծրագրում նշված է աշխատավարձերի շարունակական բարձրացման մասին: Ֆինանսական ի՞նչ աղբյուրների հաշվին եք նախատեսում այն իրականացնել:

բ/Որքանո՞վ եք կարևորում և ինչպե՞ս եք գնահատում ուսանողների ներգրավումը բուհի կառավարման ու կրթական որակյալ ծառայությունների մատուցման գործընթացում:

Պատասխան 2-րդ. _ ա/Աշխատակիցների աշխատավարձերի բարձրացումը պետք է համապատասխանի ԱՀ-ի տարբեր ոլորտների աշխատակիցների աշխատավարձերի բարձրացման նիշերին՝ հաշվի առնելով ԱՀ պաշտոնական գնաճի տեմպերը:

ԱրՊՀ եկամուտները գոյանում են 2 աղբյուրից՝ պետության ֆինանսավորում և ուսանողների վարձավճար: Մեր նպատակն է նախ՝ ապահովել պրոֆեսորի և դոցենտի տարակարգերում ընտրված ու նշանակված անձանց համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա՝ սահմանել աշխատանքի արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշներ՝ ներդնելով հաշվետվողականության համակարգ, նաև՝ սահմանել և ներդնել աշխատակիցների տարբերակված հավելավճարի համակարգ՝ ըստ նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման ցուցանիշների: Բացի այդ՝ պարբերաբար իրականացնել ուսանողների, դասախոսների և

աշխատակիցների թվաքանակների /նաև հաստիքների/ միջև հավասարակշռման գործընթացներ՝ բարձրացնելով արդյունավետության ցուցանիշները: Արդյունքում՝ հնարավոր կլինի ֆինանսական միջոցներն արդյունավետ կառավարել և այդ հնարավորությունն օգտագործել ի շահ աշխատակցի նյութական ապահովվածության:

բ/ Ուսանողական խորհուրդը կարևոր կառույց է և լուրջ դերակատարում պիտի ունենա մատուցվող կրթական ծառայությունները լավարկելու գործընթացում: Անհերքելի է, որ վերջին տարիներին ՈւԽ աշխատանքները որոշակիորեն աշխուժացել են, և ուսանողն իր դերի ու առաքելության կարևորության գիտակցումն ունի: Մեր նշանաբանն է լինելու՝ ուսանողը դասախոսի կրտսեր գործընկերն է: Հետևաբար մեր հարաբերությունները պիտի լինեն գործընկերային՝ կարծիքների հաշվառմամբ և հարգալից վերաբերմունքով:

Հարց 3-րդ. – Մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված ի՞նչ դիտարկումներ ունեք:

Պատասխան 3-րդ. – Մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերը պիտի իրականացվեն իրենց առաքելությանը համապատասխան, այսինքն՝ դրանք պիտի դիտվեն որպես գիտահետազոտական աշխատանքն ուղղորդող կրթական ծրագրեր և ոչ այս կամ այն ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածությունը լրացնելու հնարավորություն: Մենք, հնարավորություն ստանալու դեպքում, հետևողական ենք լինելու այդ կրթական ծրագրերով մատուցվող ծառայությունները լավարկելու և պահանջվող չափորոշիչներին համապատասխանեցնելու գործում:

Հարց 4-րդ. – Գյուղական դպրոցների կազմը համալրելու խնդիր կա այսօր: Ի՞նչ եք կարծում, այդ խնդիրը չի՞ կարող լուծվել հարակից մասնագիտությունների միացմամբ մեկ մասնագիտություն տալու դեպքում:

Պատասխան 4-րդ. – Անշուշտ, այդ պրակտիկան ԱրՊՀ-ն երկար տարիներ կիրառել է, և այսօր, ելնելով մեր կրթական դաշտի մարտահրավերներից, մենք հակված ենք այդ պրակտիկան նորից գործարկելու՝ մասնավորապես բնագիտական առարկաների մասով, որովհետև հեռավոր գյուղական բնակավայրեր գործուղվող շրջանավարտին մենք հաճախ առաջարկում ենք ոչ լիարժեք դրույքաչափ: Կարծում ենք՝ նպատակահարմար կլինի նաև «Քիմիա և կենսաբանություն» մասնագիտության հայտ ներկայացնելը, բայց, իհարկե, ոչ առանձին-առանձին տրվող այդ մասնագիտությունների հայտերի հետ միաժամանակ:

Հարց 5-րդ. – Այսօր ԱրՊՀ-ում մատուցվող «Ֆիզիկա» մասնագիտության կրթական ծրագիրն ի՞նչ ուղղվածություն ունի՝ մանկավարժի՞, ապագա

գիտական հետազոտողի^օ, թե^օ կիրառական հմտություններով օժտված մասնագետի պատրաստման:

Պատասխան 5-րդ. – Արդեն 3-րդ տարին է, որ բուհը մանկավարժական ուղղվածություն ունի, և բուհի շրջանավարտների բակալավրիատի ծրագիրը տվյալ մասնագիտության մանկավարժի բակալավրի որակավորումն է տալիս:

Այն, որ կարևոր են նաև մյուս ուղղությունները, մենք ևս հաշվառել ենք և մագիստրոսական կրթական ծարգրերում դրանք լուծելու տարբերակներ ենք առաջարկում:

Հայտարարվեց **հարցերի 2-րդ հերթագրում:**

Հերթագրվեցին՝

1. *Պողոսյան Նոննա*
2. *Այդինյան Շահեն*
3. *Թադևոսյան Իրա*
4. *Զաքարյան Մարիաննա*

Ըստ հերթագրման հերթականության՝ տրվեց թեկնածուին հարց տալու հնարավորություն:

Հարց 1-ին. – ԱրՊՀ-ում ուսանողը վարձավճարի չմուծման պատճառով կարող է հեռացվել, մինչդեռ ՀՀ-ի բուհերում այդպիսի դեպքերը բացառելու այլընտրանքային տարբերակներ են առաջարկվում: Ձեր մոտեցումն այս խնդրին:

Պատասխան 1-ին. – Արցախի Հանրապետությունում տարվող կրթական քաղաքականության որոշ առանձնահատկություն պիտի հաշվառել և ընդգծել. այսօր ԱՀ կառավարությունը ամբողջապես կամ մասամբ փոխհատուցում է գոհված զինծառայողների, 1-ին կարգի, 2-րդ կարգի հաշմանդամների երեխաների, 3-րդ կարգի և մանկուց հաշմանդամ ուսանողների, սպայի երեխաների ուսումնավարձերը: Բացի այդ՝ բուհում սոցիալական մի շարք խմբերի համար զեղչերի համակարգ է ներդրված՝ բազմազան ընտանիքների երեխաների, բուհում վճարովի համակարգում սովորող 3 ուսանողների ու տարբեր սոցիալական խմբեր ունեցող ուսանողների համար: Բացի այդ՝ ուսանողական խորհուրդն էլ ունի աջակցության հնարավորություններ: Կարծում եմ՝ այդ պայմանները բավարար են, որ այդօրինակ խնդիրներ չառաջանան:

Հարց 2-րդ. – **ա/** Մանկավարժի մասնագիտությունն այսօր գրավիչ չէ դիմորդների համար. որո՞նք են բուհի դերակատարությունն ու անելիքը այդ խնդրի լուծման ուղղությամբ:

բ/ Գիտություն և տնտեսություն կապը թույլ է, մինչդեռ գիտելիքը պիտի դառնա տնտեսության կառուցման հիմք, իսկ այսօր կարծես գիտությունն ինքնաբավ համակարգ է. Ձեր դիտարկումն այս հարցի շուրջ:

Պատասխան 2-րդ. – Այն համոզումն ունենք, որ բոլոր մասնագիտությունների գծով հայտերի ներկայացման հիմնավորումը պիտի լինի աշխատաշուկայի պահանջներին համապատասխանությունը, այլապես բոլոր մասնագիտությունների գծով ունենալու ենք ոչ ճիշտ հաշվեկշռված համակարգ՝ մի կողմից՝ որոշ մասնագիտությունների գծով մասնագետների սակավաթվություն, ինչն այսօր նկատելի է բնագիտական առարկաների գծով, մյուս կողմից՝ աճող պահեստուժ/իրավագետների, տնտեսագետների/։ Չնայած պիտի նշեմ, որ կատարված որոշ աշխատանքների արդյունքում որոշակիորեն պատկերը փոխվել է։ Պիտի լավարկել համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ առաջնորդվելով Արցախի Հանրապետության զարգացման ծրագրերով, աշխատաշուկայի մշտադիտարկման արդյունքներով ու կանխատեսումներով։

Իսկ որպեսզի գիտելիքը դառնա հասարակության բարիք, պիտի ստեղծել սոցիալական գործընկերության ցանց՝ ներգրավելով արտաքին շահակիցներին։

Հարց 3-րդ. – Բնագիտական առարկաների գծով այսօր արդեն դպրոցը խնդիր ունի. մանկավարժների նոր հերթափոխը կարծես չի ձևավորվում, այս խնդրի կարգավորման հնարավոր ի՞նչ միջոցներ եք նախանշում։

Պատասխան 3-րդ. – Մեր ծրագրում կարևորել ենք բնագիտական առարկաների և նշյալ մասնագիտությունն ընտրող դիմորդների նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի դրսևորումը, մասնավորապես նպատակահարմար է կազմակերպել անվճար նախապատրաստական դասընթացներ այդ դիմորդների համար ու նաև ընդլայնել համալսարանի հետ համագործակցող ավագ և միջնակարգ դպրոցների շրջանակը՝ այդ մասնագիտությունների գովազդման բոլոր հնարավորություններն օգտագործելով։

Հարց 4-րդ. – Դուք հնարավո՞ր եք համարում, որ ԱրՊՀ-ն ունենա հնարավորություն և իր լավագույն ուսանողին աշխատանքով ապահովելու արտոնյալ պայմաններ ընձեռնի՝ առանց հայտարարվող մրցույթներին ուսանողի մասնակցության, այլապես այդ մրցույթներից հետո ուսանողը մնում է մշտակա սպասումներում։

Պատասխան 4-րդ. – ԱրՊՀ լավագույն ուսանողը լավագույնի իր տիտղոսը պիտի պահպանի նաև մրցույթին մասնակցելով։ Իսկ ինչ վերաբերում է մրցույթներին, ապա պիտի նշեմ, որ ԿԳՍ նախարարի հանձնարարականով այն բոլոր մասնակիցները, ովքեր լավագույն արդյունք են գրանցել, բայց սահմանափակ էր թափուր տեղերի քանակը, կմնան պահեստուժ և թափուր աշխատատեղ լինելու դեպքում կրկին չեն մասնակցի մրցույթի, կօգտագործեն իրենց՝ նախորդ մրցույթում ստացած միավորները։

Ամփոփելով թեկնածուներին ուղղված հարցերն ու դրանց պատասխանները՝ խորհրդի նախագահն առաջարկեց **5 րոպեանոց ընդմիջում**, ինչն ընդունվեց խորհրդի կողմից:

Ընդմիջումից հետո խորհրդի նախագահն առաջարկեց սկսել քննարկումն ու ելույթների հերթագրումը՝ հիշեցնելով, որ ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

Ելույթների հերթագրման հայտ չեղավ:

Խորհրդի նախագահը, հետևելով աշխատակարգին, բարձրաձայն ընթերցեց թեկնածուների անունները՝ նշելով.

Արցախի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնի հավակնորդներն են՝

Աբրահամյան Արտեմ Նիկոլայի

Աթայան Կամո Իվանի

Սարգսյան Արմեն Յուրիկի:

Ապա հրահանգեց խորհրդի քարտուղարին երեք թեկնածուների անունները ներառել քվեաթերթիկում:

2. Որոշեցին՝

ա/ Ի գիտություն ընդունել ռեկտորի թեկնածուների ծրագրային ելույթները
բ/ Հաստատել երեք հավակնորդների՝ ընտրության մասնակցությունն ու նրանց անունները գրանցումը քվեաթերթիկում:

3. Լսեցին՝

Ռեկտորի ընտրության կազմակերպման հարցը:

ա/ Խորհրդի նախագահը ներկայացրեց քվեարկության կարգը. ըստ որի՝ քվեարկությունը փակ գաղտնի է, քվեաթերթիկում թեկնածուների անունները նշված են այբբենական կարգով, վերջում՝ *բոլորին դեմ եմ* վանդակը: Ընտրողը քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի ազգանվան-անվան դիմաց՝ «V»-աձև: Եթե նա դեմ է բոլոր թեկնածուներին, ապա նշում է կատարում «բոլորին դեմ եմ» գրառմամբ վանդակում: Ու վերջում հորդորեց՝ հետևել և պահպանել գաղտնի քվեարկության կարգը:

բ/Ապա առաջարկվեց խորհրդին իր կազմից ընտրել 5 անդամներից կազմված հաշվիչ հանձնաժողով:

Առաջարկվեցին հաշվիչ հանձնաժողովի անդամության թեկնածուներին.

1. Մանգասարյան Ռուզաննա

2. Խաչատրյան Դիանա

3. Այդինյան Շահեն

4. Ղարախանյան Լուսինե

5. Աբրահամյան Սուսաննա

6. Բարսայան Դավիթ

Սուսաննա Աբրահամյանն ինքնաբացարկ տվեց, մյուսների թեկնածությունները խորհրդի քվեարկությամբ հաստատվեցին:

Խորհրդի նախագահը հիշեցրեց, որ ընտրված թեկնածուներն իրենց կազմից պիտի ընտրեն հանձնաժողովի նախագահ և քարտուղար՝ անդամների ձայների պարզ մեծամասնությամբ և կազմակերպեն փակ գաղտնի քվեարկությունը: Ապա քարտուղարը բոլորին ներկայացրեց դատարկ քվեատուփը, որը խորհրդի անդամների ներկայությամբ փակվեց, կնիքվեց և 27 քվեաթերթիկի հետ հանձնվեց հաշվիչ հանձնաժողովի անդամներին:

Խորհրդի նախագահը բոլորին դուրս հրավիրեց՝ հաշվիչ հանձնաժողովի կազմին հնարավորություն տալով աշխատանքն ըստ ընթացակարգի կազմակերպելու:

զ/ Ընտրության արդյունքները հրապարակեց հաշվիչ հանձնաժողովի ընտրված նախագահ Ռ. Մանգասարյանը/արձանագրությունը կցվում է. առդիր 1 էջ/:

Համաձայն տրված տեղեկության՝ **քվեարկությանը մասնակցել է 27 անդամ, անվավեր քվեաթերթիկ չկար, Արտեմ Նիկոլայի Աբրահամյանին տրվել է 4 քվե, Կամո Իվանի Աթայանին՝ 1 քվե, Արմեն Յուրիկի Սարգսյանին՝ 22 քվե:**

Այդպիսով՝ առաջարկվեց խորհրդի անդամներին հաստատել քվեարկության արդյունքները և որպես ԱրՊՀ ռեկտոր՝ ընտրված համարել Արմեն Յուրիկի Սարգսյանին:

3.Որոշեցին՝

ա/Հաստատել ռեկտորի ընտրության փակ գաղտնի քվեարկության արդյունքները.

բ/Արցախի պետական համալսարանի ռեկտորի ընտրությունները ճանաչել վավեր.

զ/ Արցախի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնում ընտրված համարել Արմեն Յուրիկի Սարգսյանին.

դ/Խորհրդի որոշման մեկ օրինակը կից գրությամբ ներկայացնել լիազորված պետական մարմին:

Նիստի նախագահ՝
Քարտուղար՝

Մարտիրոսյան Գ.Ի.
Մարգարյան Լ.Գ.

